տեր էր ընդարձակ կալվածքների, գլխավորապես Վերին Սիսիանում՝ Անգեղակոթի, Սիսիանի (Սիսավանի-Ղարաքիլիսայի), Շաքիի, ինչպես և Տաթևի մահալի վերնագավառում՝ Ջաբուխի. մյուսը՝ Հաջի-Բեգլար-բեկը, մահալի քրդական վայրերում՝ Ջիջիմլիի, երրորդը՝ կապիտան Ռուստամ-բեկը՝ այնպիսի խոշոր գյուղերում, ինչպիսին էին Կոռնձորը և Խանածախը (Քեշիշքենդը), որոնք Տաթևի մահալի սահմաններումն էին, որտեղ Տեղն էլ պատկանում էր Ռուստամ-բեկի որդի Ասատ-բեկին, իսկ Ռուստամ-բեկի մոր կալվածքն էր Յերիշեն՝ (Գեղիշա) հայկական գյուղը։ Այս ընտանիքը բավականին մեծ դեր էր խաղում ամբողջ Եռաբլրի (Ուլթափալարի) սարահարթի և հարևան Ղարաքաղի հրաբխային բարձրավանդակի վրա, որտեղ գրեթե, բացառապես նրանց էին անմիջապես ենթարկվում բազմաթիվ թրքական* և քրդական ձմեռանոցներ։ Այս ընտանիքից մանավանդ Հաջի-Աղալար-բեկը, որը ուներ նաև ռուսական կապիտանի տիտղոս, ստացել էր մեծ հեղինակություն Մեհտի-Ղուլի խանին մատուցած ծառայության համար։ Նա «ստացել էր որպես սեփականություն նաև ամբողջ Սիսիանի մահալը»[3]։ Նրա կալվածքները ընդարձակվել էին մեծ հռչակ վայելող ռուսական գեներալ Կոտլյարևսկու միջնորդությամբ։ Նրան զիջված էին ժառանգաբար մի քանի պետական տուրքերն, օրինակ՝ ֆալանքարլրը Տաթևի, Կյուպարայի և Աճանան թուրք մահալներից, երկու ձիավոր պահանջելու իրավունքը Գորիսից, 6 արոր մեկ ամսով Խնձորեսկից Կուբաթլիի հողերը վարելու համար։ Այսպիսի ազդեցիկ կալվածատիրոջ ներկայությունը մահալում չափազանց թուլացնում էր մահալի մելիքի իրավասությունը։ Նույնպիսի խառնաշփոթություն էր մտցնում նաև մասնավոր մելիքների առկայությունը մահալի առանձին գյուղերում, օրինակ՝ Գորիսում, որտեղ կառավարում էր մելիք Հարությունը։ Այսպիսի դրություն տեղի ուներ ոչ միայն Սիսիանի և Տաթևի, այլև մնացած մահալներում։ Մահալը չէր ներկայացնում վարչական ամբողջություն և մահալական մելիքի իրավասությունը հավասարապես չէր տարածվում մահալի բոլոր մասերում, ինչպես նաև մահալում ապրող բոլոր ազգությունների վրա։ Մինչդեռ հայ բնակչությունը կառավարվում էր և դատվում դարերի ընթացքում տեղական պատմական պայմաններում մշակված իրավահասկացողությամբ, թուրք և քուրդ բնակչությունը դեռ ուժեղ պահպանում էր իր դրսից բերած ցեղական կազմակերպչական ձևերը և ըստ մահմեդական իրավունքի՝ դատական գործերում ղեկավարվում էր շարիաթով։

Ըստ Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի նկարագրության հնարավոր է գծել այն ժամանակվա մահալների քարտեզը[4]։

Սիսիանի մահալ. մելիքը նստում էր Բռնակոթ գյուղում. 1823 թվականին մելիք Թանգին էր։ Մահալը ընդգրկում էր նաև Ախլաթանը, Ղըզըլշաֆակը՝ Շիլարը, Արավուսը (Սաֆար Ալի կամ Շահարջի 2-րդը), Ուզը, Ուռուտը, Դաստակերտը, այսինքն՝ դեպի Որոտան (Բազարչայ) բացվող աջակողմյան գետահովիտները. այստեղ 9 գյուղերում զետեղված էին 203 ծուխ՝ ընտանիք, որոնցից 103-ը հայ և 100-ը թուրք։

---

[3] «В вознаграждение усердия его Мехти-Кули-хан весь сей (Сисианский) магтал с принадлежащими к оному землями потомственно подарил в собственность Аджи-Агалар-беку».

[4] Տե՛ս կցված քարտեզը։ Հեղինակը չի հասցրել գծելու (Ծան. խմբ)։

* Հեղինակը «թուրք» բառի տակ նկատի ունի այժմյան ադրբեջանցիներին։ Խմբ.։